10
560



ՍԻՄԷՕՆ ՔԱՋԷՆ

ԱՐՑՈՒՆՔԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

1917. Թաւրիզ

10
560





ՍԻՄԷՕՆ ԲԱՋԷՆ
ԱՐԵՒԵԼՔԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ
1917 Թաւրիզ

ԲԲՁՁ 536/560



10
560

Թէ տանջւում ես չքնաղ կոյսի
Վշտոտ սէրից,
Համբոյր քաղիր անուշահոտ
Վարդերից.
Թէ նեղւում ես սիրտդ մաշող
Խորհերից,
Ա՛ռ քնարդ, երգիր գարնան
Վարդերից.
Իսկ երբ մահուան վերջին շունչը
Փչի քեզ,
Գինի խմիր, կեանքում նորից
Կծաղկես...

Ջան վարդ աղջիկ, տուր աչերդ ինձ պայծառ
Չէ՞ խաւարում լոյս աստղեր են հարկաւոր
Դէմքդ ցոյց տուր, էս ինչ մութ է ու խաւար
Չէ՞ որ մթան վառ լուսին է հարկաւոր։
Տո՛ւր ինձ սիրտդ, տառապում եմ սիրահար
Սիրող սրտին մի դարման է հարկաւոր.
Շուշան բուռդ գինի լցրու ինձ համար
Չէ՞ որ գինուն մի աման է հարկաւոր։
Նստիր կողքիս, թոյլ տուր նստեմ քո կողքին,
Չէ՞ երգողին մի լսող է հարկաւոր,
Եկ, վարդ աղջիկ, սղմեմ ամուր իմ կրծքին
Ախր վշտին կարեկցող է հարկաւոր...

Գարունն իմ եարին այգի է գալիս,
Ո՞ր վարդն է բուրում իմ վարդ եարի պէս.
Բլբուլներն անտ համերգ են տալիս,
Էն ո՞րն է երգում բլբուլ եարիս պէս:
Լազուր կամարից արեւը ժպտաց,
Կարկաչեց առուն, արթնացաւ անտառ.
Ո՞վ էր եարիս պէս քաղցրաձայն խնդաց,
Էն ո՞ւմ ժպիտն է աւելի պայծառ:
Մեղմիկ սոսափով անցաւ մի զեփիւռ,
Գգուեց համբուրեց ծառ, ծաղիկ ու սէզ.
Էն ո՞վ եարիս պէս տալիս է համբոյր,
Էն ո՞ւմ համբոյրն է անոյշ եարիս պէս...

Կգա՞ս ինձ հետ, եար, էս գիշեր մեր այգին
Կիրք ու հանոյք քո այգին են սպասում.
Անուշ անուշ դու կննջես իմ գրկին
Ու կգրկես ինձ քո անոյշ երազում..
Եա՛ր, չուշանաս. տես թէ ինչպէս եմ լալիս,
Ախր սիրտս պիտի բանամ սրտիդ մօտ.
Էս գիշերն էլ կարծես դիտմամբ չի գալիս
Ծաղկի՛ր շուտով դէմքդ, արեւ անամօթ..
Կգա՞ս ինձ հետ, եար՝ խոստումդ նուագիր,
Ես մարեցի քեզ գրկելու տենչանքից.
Է՜յ Աստուած ջան, գիշերը շուտ ուղարկիր,
Վախենում եմ սիրտս պայթի հրճուանքից...

Մարմարիոնէ սիւներդ իմ կրծքին
Գիշերով.
Ես հանգչեցի մոռացութեան բարձունքին
Յուշերով...
Ու դուրեկան մի դող անցաւ իմ մարմնով,
Սահելով
Շուրջը նիրհեց մեր գաղտնիքն անվրդով
Պահելով...
Հաճոյքների մի վարկեան էր, մեզ գրկեց.
Հեռացաւ.
Մէկը կարծէս տխսատանքի երգ երգեց
Ու անցաւ...
Մարմարիոնէ սիւներդ իմ կրծքին
Ցրելով,
Նորից, նորից կարօտեցի քո շնչին
Գիշերով...

Եա՛ր, քո գրկում, կանաչ այգում
Սիրոյ թովչանք ու բերկրանք.
Լուսնի հսկում ջինջ երկնքում,
Անվերջ գգւանք, խինդ ու կեանք:

Գիշերը լուռ, մեղմիկ զեփիւռ,
Գարուն յոյսեր, յոյզ ու սէր.
Յասմիկ ու բոյր, անուշ համբոյր,
Գրկիս վարդեր, փունջ հիւսեր:

Ու մինչեւ լոյս, մինչ արշալոյս
Ժպիտ ու յուշ մեր չորս դին,
Մենք հիւսեցինք ու երգեցինք
Սիրոյ անուշ մեղեդին: